

18255

327

u-84



№ 11 ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՍԻՅՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ № 11

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք!

9683

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՏԱՆ

ՎԻԼՍԸՆԻՆ

ԳԻՆՆ Է՛ 75 Կ.



ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ՄՈՍԿՎԱ—1918

327
10-84

15 JAN 2010

327-13.05.2013

ku-84

29

27 SEP 2006

Գլխի տեղ-վանկայակից. 3/ն 242.

№ 11 ՌՈՒՍԱՍՏՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՍԻՅԻ ՀԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք!

300

1333-խո



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՏԱՆ

ՎԻԼՍԸՆԻՆ



ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ԽՈՍԿԻՆ—1918

9683

913

18255

8185 20 21

807 432 1 5



Մ Ո Ս Կ Ի Ա,
Տպարան Եղր. Կ. և Ռ. Մ Ո Ւ Ր Ա Գ Ի Ե Ա Ն Ն Ե Ր Ի
1918

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՏԱՆ ՎԻՍՈՇՆԻՆ

Հիսուսային Ամերիկայի Միացեալ Նահանգների Նախագահ
Վուդրո Վիլսոնին

Պ ա Ր Ո Ն Ն ա խ ա գ ա 4.

Յունուարի 18-ին Հիւսիս-Ամերիկեան Միացեալ Նահանգների կոնգրեսին ուղղած Ձեր զրութեան Ե-րդ յօդուածի մէջ Դուք Ձեր խորին համակրանքը յայտնեցիք Ռուսաստանին, որ այն ժամանակ դէմ առ դէմ կանգնած բանակցութիւններ էր վարում գերման հզօր իմպերիալիզմի հետ Դուք ասում էիք, թէ Ձեր նպատակն է ազատագրել ռուսական ամբողջ տերրիտորիան և Ռուսիային վերաբերեալ հարցերն այնպիսի ձևով լուծել, որ միւս ազգերն իրենց ամենակատարեալ և ազատ օժանդակութեան երաշխիքը տան Ռուսաստանին, լիակատար և անարդէլ հնարաւորութիւն ընձեռելով նրան, որպէսզի նա անկախօրէն որոշի իր սեփական քաղաքական զարգացման և ազգային քաղաքականութեան ընթացքը, — մի ընթացք, որ կապահովի Ռուսիայի սրտազին ընդունելութիւնն ազատ ազգերի միութեան մէջ, պահպանելով կառավարական այն ձևը, որ նա ինքն իր համար կրնար ի. այդ ընթացքը կապահովի նաև ամեն տեսակ օժանդակութիւն, որի կարիքը

կղզայ նա և կամ ինքը կհամենայ: Ու զուր ուե-
լացրել էիք նաև, «Թէ այն վերաբերմունքը, որ
կունենան դէպի Ռուսաստանն ուրիշ մեծ ժողո-
վուրդներն առաջիկայ ամիսների ընթացքում, կլինի
այն փորձաքարը, որի միջոցով կարելի կլինի գնա-
հատել նրանց դէպի Ռուսաստանն ունեցած բարի
զգացումները, նրա կարիքների ըմբռնումը, որ սար-
բերում են իրենց սեփական շահերից, ինչպէս և
այդ ժողովուրդների իմաստութիւնն ու համակ-
րանքի անշահախնդրութիւնը»:

Ըստ երևոյթին, այն կատաղի պաշարը, որ
Բրեսա - Լիտովսկում մենք մղել ենք զերման իմպե-
րիալիզմի դէմ, աւելի սրտազին դարձրած պիտի
լինէր միայն Խորհրդային Ռուսիայի հանդէպ ունե-
ցած Ձեր համակրանքը, որովհետև զերման արշաւի
սպառնալիքի սակ Բրեսաի բռնադատ հաշտու-
թիւնը վաւերացնող Խորհուրդների համադումարին
Դուք Ձեր ողջոյնն էիք ուղարկել և հաւաստիա-
ցումը, թէ Խորհրդային Ռուսիան կարող է իր յօրը
դնել Սմերիկայի օգնութեան վրայ:

Այդ օրից անցել է վեց ամիս: Եւ Ռուս ժո-
ղովուրդը բաւականին ժամանակ է ունեցել ճշա-
րէն գնահատելու Ձեր կառավարութեան և Ձեր
դաշնակիցների իր հանդէպ ունեցած բարի զգա-
ցումները, իր կարիքների ըմբռնումը, նրանց իմաս-
տութիւնն ու համակրանքների անշահախնդրու-
թիւնը: Ձեր և Ձեր դաշնակիցների դէպի Ռուսաս-
տանն ունեցած այդ վերաբերմունքը նախ և առաջ

արտայայտեց այն բանում, որ Ձեր Ֆրանսացի
դաշնակիցների զրամական օժանդակութեամբ և
Ձեր իսկ կառավարութեան գլխանազիտական ա-
զակցութեամբ ռուսական հողի վրայ կազմակերպեց
չէխ - սլովակների դաւը, որոնց ամեն տեսակ օգ-
նութիւն է հասցնում Ձեր կառավարութիւնը: Որոշ
ժամանակի ընթացքում փորձեր էին արւում ա-
ռիթ ստեղծելու Ռուսիայի և Միացեալ Նահանգ-
ների միջև պատերազմ հրահրելու համար, և այդ
նպատակով տարածում էին այնպիսի ստալոզ տե-
ղեկութիւններ այն մասին, որ իբր թէ զերման
զերինքը զրուել են Սիրիի երկաթուղին: Բայց
Ձեր իսկ սպաները, իսկ նրանցից չետոյ նաև Ձեր
Կարմիր Խաչի վարիչ գնդապետ Ռոբէնար ի վիճակի
եղան համոզւելու, որ այդ բոլորն էլ հնարովի բա-
ներ են: Չէխ - սլովակների ապստամբութիւնը կազ-
մակերպւած էր այդ դժբաղդ և խաբւած մարդկանց
իբր թէ պաշտպանելու համար Գերմանիային և
Աւստրիային լանձնելու վտանդից: Բայց զուր կա-
րող էք, ի միջի այլոց, Ֆրանսիական զինուորական
պատւիրակութեան անդամ կապիտան Սազուլի
զբաժ բաց նամակից տեղեկանալ, թէ իրական հի-
մունքներից որչափ զուրկ է այդ չերիւրանքը: Դեռ
տարւայ սկզբին միայն այն պատճառով չմեկնեցին
չէխ - սլովակները Ռուսիայից, որ Ֆրանսիական կա-
ռավարութիւնը նրանց համար շոգենաւեր չուղար-
կեց: Մի քանի ամիս մենք ի զուր սպասեցինք, որ
Ձեր դաշնակիցներն երթալու հնարաւորութիւն

տան չեխ - սյրվակներին: Ակներև է, որ այդ կառավարութիւններին աւելի ձեռնառու էր չեխ - սյրվակների մնայր Ռուսաստանում (թէ ինչ նպատակով՝ այդ ցոյց աւելն յետակազ դէպքերը), քան թէ նրանց Փրանսիա գնայր՝ Փրանսիական սահմանի վրայ պատերազմին մասնակցելու: Չեխ - սյրվակների ապստամբութեան իսկական բնաւորութիւնն ամենափայլուն կերպով ապացուցանում է այն փաստը, որ իրենց ձեռքին ունենալով Սիբիրի երկաթուղին, չեխ - սյրվակները գնալու համար չօգտուեցին այդ երկաթուղով, այլ իրենց ղեկավար Համաձայնութեան կառավարութեանց հրահանգով դերադասեցին բուն Ռուսիայում ուստի հակա - յեղափոխութեան նեղուկը դառնալ: Նրանց հակա - յեղափոխական ապստամբութիւնը, որ անհնարին զարձրեց Վոլգայով հացի ու նաւթի փոխադրութիւնը, որ բանւորներին ու զիւղացիներին Սիբիրի հացի և այլ մթերքների շտեմարաններից կտրեց ու սովի մատնեց: — Ահա թէ ամենից առաջ ինչ տեսան ու ճաշակեցին Ռուսիայի բանւորներն ու զիւղացիները Ձեր և Ձեր զաշնակից կառավարութեանց կողմից՝ դեռ տարւայ սկզբին տւած Ձեր խոստումներից չետոյ: Իսկ զրանից անմիջապէս չետոյ նրանք մի ուրիշ բան էլ ճաշակեցին — ամերիկեան զօրքերի մասնակցութեամբ զաշնակից զօրքերի չարձակումը Ռուսիայի հիւսիսի վրայ, առանց որ և է առիթի և պատերազմի յայտարարութեան նրանց ուստի կան սահմաններ ներխուժելը, ուստի քաղաքների ու

զիւղերի գրաւումը, Խորհրդային պաշտօնակատար անձանց զնդակահարումն և ուստի խաղաղ բնակչութեան զլիսին կատարած ամեն տեսակ բռնութիւնները:

Պարոն Նախագահ, Դուք խոստացել էիք օգնել Ռուսիային, որ նա լիակատար և անարգել հնարաւորութիւն սասնայ՝ անկախօրէն տնօրինելու իր քաղաքական զարգացումն և իր ազգային քաղաքականութիւնը: Իսկ իրօք Ձեր այդ օժանդակութիւնն արտայայտեց նրանում, որ չեխ - սյրվակների զօրքերը, իսկ նրանցից անմիջապէս չետոյ նաև Ձեր սեփական և Ձեր գաշնակիցների զօրքերը, — Արխանգելսկում, Մուրմանում, Հեռաւոր Արևելքում փորձեցին բռնութեամբ ուստի ժողովրդի վրովը փաթաթել այն ճնշողների, շահագործող այն դասկարգերի իշխանութիւնը, որոնց լուծը դեռ անցեալ տարւայ հոկտեմբերին թօթափեցին ուստի բանւորներն ու զիւղացիք: Արդէն դիակնացած ուստի հակա - յեղափոխութեան կենդանանալը և նրա արիւնտա իշխանութիւնը բռնութեամբ ուստի ժողովրդի վրայ վերահաստատելու համար կատարած փորձերը — ահա թէ ինչ ճաշակեց ուստի ժողովուրդը, Պարոն Նախագահ, փոխանակ ստանալու այն օժանդակութիւնը, որ Դուք խոստացել էիք Ձեր յայտարարութիւնների մէջ՝ նրա կամքի անարգել արտայայտութիւնը հնարաւոր զարձնելու համար: Ճիշտ այդպէս էլ Դուք, Պարոն Նախագահ, խոստացաք ուստի ժողովրդին օգնել իր անկախու-

Թեան համար մղող պատերազմում: Բայց իսկապէս տեղի ունեցաւ այն, որ այն ժամանակ, երբ հարաւալին Փրոնտում ոռւս ժողովուրդը կռիւ էր մղում գերման իմպերիալիզմին ծախւած և իր անկախութեանն սպառնացող հակա - յեղափոխութեան դէմ, երբ իր արեւմտեան սահմանում ոռւս ժողովուրդը լարում էր իր բոլոր ուժերն իր երկրի պաշտպանութիւնը կազմակերպելու համար, նա ստիպւած եղաւ իր զօրքերը նետել դէպի Արևելք՝ իրեն ստրկութիւն ու ճնշում բերող չեխ - սլովակների դէմ, և՛ դէպի Նիւսիս՝ իր սահմանները ներս խուժած Ձեր սեփական ու Ձեր դաշնակիցների զօրքերի, և այդ զօրքերի ձեռքով կազմակերպւող հակա - յեղափոխութեան դէմ:

Միացեալ-Նահանգների և Ռուսիայի չարաբերութեան փորձաքարը չուէց այն հեռանքները, որ կարելի էր սպասել կոնդրեսին ուղղած ձեր թղթից, Պարոն Նախագահ: Բայց մենք հիմք ունենք ամենեկին դժգոհ չլինել և այդ հեռանքներից, որովհետև հակա-յեղափոխութեան վայրագութիւնները թէ՛ Արևելքում և թէ՛ Նիւսիսում Ռուսաստանի գիւղացիներին ու բանւորներին ցոյց տւին, թէ ի՞նչ բանի են ձգտում ոռւս հակա-յեղափոխութիւնն ու նրա արտասահմանեան օգնականները: Դրա շնորհիւ հէնց դարբնւէց ոռւս աշխատաւոր ժողովրդի երկաթէ կամքը՝ պաշտպանելու ազատութիւնը, յեղափոխութեան նւաճումները, գիւղացիներին տրւած հողը և բանւորներին տրւած զօր-

ճարանները: Կապանի, Սիմբիրսկի, Սիլբանի, Սամարայի անկումից յետոյ Ձեզ համար ևս, Պարոն Նախագահ, պարզ պիտի լինէր, թէ իրօք ի՞նչ հետեւանքներ ունէր մեզ համար այն, որով մարմնաւորել էին իրօք չունւարի 18-ին Ձեր տւած խոստումները: Մեր կրած փորձութիւնը նպաստեց ստեղծելու մի կուռ և կարգապահ Կարմիր Բանակ, որ օրէ-ցօր աճում է իր ուժով ու զօրութեամբ և ստիճում յեղափոխութիւնը պաշտպանելու: Այն վերաբերմունքը, որ Ձեր կառավարութիւնը և Ձեր դաշնակիցները հրապարակ հանեցին մեր հանդէպ, չէր կարող խորտակել մեզ, ընդհակառակն, մենք այժմ աւելի զօրեղ ենք քանի մի քանի ամիս առաջ և ընդհանուր հաշտութեան կնքելու համար Ձեր սկսած միջազգային բանակցութիւնները գտնում են մեզ կենդանի ու զօրեղ և թող են տալիս մեզ Ռուսաստանի անունից չաչտնելու, թէ մենք պատրաստ ենք այդ բանակցութիւններին մասնակցել: Իբրև զինադադարի նախապայման, — որի ընթացքում պէտք է խաղաղութեան բանակցութիւնները տեղի ունենան, — Գերմանիային տւած Ձեր նոստում դուք պահանջ էք դրել թողնել զրաւած շրջանները: Մենք պատրաստ ենք, Պարոն Նախագահ, այդ պայմանով զինադադար կնքել և խնդրում ենք — տեղեկացնել մեզ, թէ Դուք և Ձեր դաշնակիցները, Պարոն Նախագահ, երբ էք մտադիր հեռացնել ձեր զօրքերը Մուրմանսկից, Արխանգելսկից ու Սիբիրից: Դուք համաձայն չէք զինադադար

աներ, Պարոն Նախագահ, եթէ Գերմանիան իր նւա-
հած վայրերը թողնելիս չհրաժարուի խժողովութիւն-
ներից, կողոպուտից և այլն: Իրանից մենք համար-
ձակուում ենք անել այն եզրակացութիւնը, թէ
Դուք ու Ձեր դաշնակիցները կհրամայէք չեխ-սլո-
վակներին, որ վերադարձնեն Կողոպուտ կողոպտած
մեր ոսկու պահեստի մի մասը, թէ Դուք կարգելէք
նրանց, որ իրենց հարկադրեալ նահանջի ժամանակ,
որովհետև մենք պիտի ստիպելինք նրանց շուտով
հեռանալ առանց Ձեր հրամանին սպասելու, նրանք
այլևս չեն շարունակի իրենց այան-թալանչիական
գործողութիւնները և բանւորների ու զիւղացինե-
րի վրայ այլևս գործ չեն դնի իրենց մինչ այսօրւայ
բռնութիւնները:

Ինչ վերաբերում է հաշտութեան Ձեր միւս
պայմաններին, որոնք կայանում են նրանում, թէ
հաշտութիւն կնքող կառավարութիւնները պէտք է
լինեն ժողովրդական զանգւածների կամքի արտա-
յատիչը, ինչպէս չայտնի է այդ Ձեզ, մեր Կառա-
վարութիւնը միանգամայն համապատասխանում է
այդ պահանջներին: Մեր Կառավարութիւնն արտա-
յատում է բանւոր, զիւղացիական և Կարմիր Բա-
նակի մարտիկների Պատգամաւորական Խորհուրդ-
ների կամքը, որոնք ներկայացնում են առնւազն
ուսու ժողովրդի 80⁰/₀, մի բան, որ չի կարելի ասել
Ձեր կառավարութեան մասին Պարոն Նախագահ:
Բայց յանուն մարդասիրութեան ու խղճողութեան
մենք ընդհանուր հաշտութեան բանակցութիւն-

ների պայման չենք դնում, որ այդ բանակցութիւն-
ներին մասնակցող բոլոր կառավարութիւններն ան-
պատեառ ներկայանան յանձինս Բանւոր, Գիւղ. և
Ձին. Պատ. Խորհուրդների ճամազուածարից բնտրւած
ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների: Մենք
զիտենք, որ ժողովուրդների կառավարութեան այդ
ձևը շուտով պետական ընդհանուր ձև կդառնայ և
հէնց ընդհանուր հաշտութիւնը, որ կազատէ ժո-
ղովուրդները կործանման սպառնալիքից, բաց կանի
նրանց թևերը՝ իր դատաստանն անելու համար այն
իրաւահարզի և այն խմբակների նկատմամբ, որ
մարդկութիւնը համաշխարհային այս սպանդանոցի
մէջ նետեցին և որ իրենց կամքին հակառակ ան-
կասկած կմղէն յոշոտուած ժողովուրդները ստեղ-
ծելու իրենց կամքը եշտօրէն արտայայտող Խոր-
հրդային Կառավարութիւններ:

Մեր համաձայնութիւնը տալով մասնակցելու
այժմ բանակցութիւններին նոյնիսկ կառավարու-
թիւնների հետ, որոնք տակաւին ժողովրդի կամքը
չեն արտայայտում, մենք մեր կողմից կկամենայինք
ձեզնից մանրամասնօրէն իմանալ, Պարոն Նախա-
գահ, թէ ինչպէս էք պատկերացնում ժողովուրդ-
ների դաշնակցութիւնը, որ Ձեր կարծիքով
հաշտութեան գործը պիտի պսակի: Դուք Լեհաս-
տանի, Սերբիայի, Բելգիայի անկախութիւնն և
Սւստրո-ճունդարիայի ժողովուրդների ազատու-
թիւնն էք պահանջում: Ամենայն հաւանականու-
թեամբ՝ Դուք դրանով ջանկանում էք ասել, որ

ամենուրեք նախ և առաջ ժողովրդական զանգւածներն իրենց ձեռքը պիտի վերցնեն իրենց սեփական բաղդի անօրինութեան գործը, որպէսզի յետոյ միանան ժողովուրդների զաշնակցութեան մէջ: Բայց, տարօրինակ կերպով Ձեր պահանջների մէջ մենք չենք նկատում ո՛չ Իրլանդիայի, Եգիպտոսի ու Հնդկաստանի և ոչ իսկ Փիլիպիայի ազատութեան պահանջը, և մենք խորապէս պիտի ցաւէինք, եթէ այդ ժողովուրդները մեզ հետ միասին ի վիճակի չլինէին, իրենց ազատօրէն ընդունած ներկայիչների միջոցով, մասնակցելու ժողովուրդների զաշնակցութեան կազմակերպման գործին: Մենք նոյնպէս շատ կկամենայինք, Պարոն Նախագահ, ժողովուրդների զաշնակցութիւնը ստեղծելու մասին ունենալիք բանակցութիւններից առաջ իմանալ, թէ ինչպէ՞ս էք Դուք պատկերացնում անտեսական բնոյթ կրող բազմաթիւ հարցերի լուծումն, հարցեր, որ ապագայ հաշտութեան դատի համար էական նշանակութիւն ունին: Դուք չէք չիշատակում ռազմական ծախսերը, ուժերից վեր այդ բեռը, որ պիտի ընկնէր ժողովրդական մասսաների ուսերին, եթէ ժողովուրդների զաշնակցութիւնը չհրաժարէր բոլոր երկրների կապիտալիստներից փոխառութիւնների միջոցով արւած պարտքերը վճարելուց: Դուք դիտէք մեզանից ոչ պակաս, Պարոն Նախագահ, որ այս պատերազմը կապիտալիստական բոլոր պետութիւնների քաղաքականութեան հետևանքն է, որ բոլոր երկրների կառավարութիւններն էլ մրցում

էին իրար հետ սպառազինման գործում, որ քաղաքակիրթ բոլոր ժողովուրդների իշխող խմբերն էլ մասնակցել են նւաճումների քաղաքականութեան, և որ, հետևաբար ծայրայեղօրէն անարդարացի պիտի լինէր, եթէ ժողովրդական մասսաները, որ այդ քաղաքականութեան համար միլլիոնաւոր մարդկանց արիւնով ու անատեսական քայքայումով են վճարել, դեռ ևս մի առանձին տուրք էլ վճարեն պատերազմի իսկական շնչաւորներին՝ նրանց այն քաղաքականութեան համար, որ առաջ է բերել այս անչափելի զժրագլութիւնները: Ուստի մենք առաջարկում ենք, Պարոն Նախագահ, որ ժողովուրդների զաշնակցութիւնը, որպէս հիմք իր գոյութեան, ընդունէր հրաժարումը ռազմական փոխառութիւնները վճարելուց: Իսկ ինչ վերաբերում է պատերազմից աւերւած երկրների վերականգնմանը, ապա մենք միանգամայն արդարացի ենք համարում, որ այդ տեսակէտից բոլոր ժողովուրդներն էլ օգնութեան հասնէին զժրագլ Բելգիային, Լեհաստանին, Սերբիային: Եւ որքան էլ աղքատիկ ու սնանկացած թւայ Ռուսիան, նա պատրաստ է իր կողմից ինչով որ կարող է, օգնել պատերազմի այդ զոհերին, և սպասում է, թէ այս պատերազմից ոչնչով չվնասւած բայց նրանից բազմամիլլիոն օգուտներ քաղած ամերիկեան կապիտալն իր կողմից իր ուժերի չափով կօզնի այդ ժողովուրդներին:

Սակայն ժողովուրդների զաշնակցութիւնը ո՛չ միայն պիտի վերջ տայ այս պատերազմին, այլ

և անհնարին պիտի դարձնի տոհաստարակ ապագայում: Ձեզ անյայտ չի կարող լինել, Պարոն Նախագահ, որ Ձեր երկրի կապիտալիստները մտածում են ապագայում էլ կիրառել նւանումների և դերձահ ստանալու նոյն քաղաքականութիւնը Չինաստանում, Սիբիրում և որ, երկիւղ կրելով եապոնական կապիտալի մրցումից, նրանք ռազմական ոյժ են հաւաքում ճնշելու այն ընդդիմութիւնը, որ կարող է ցոյց տալ նրանց Յապոնիան: Անկասկած, Ձեզ յայտնի են նաև ուրիշ տերրիտորիաների և ուրիշ ժողովուրդների վերաբերեալ միւս երկիրների կապիտալիստական իշխող շրջանների ունեցած նոյնանման ծրագիրները: Այդ խմանալով, Դուք պիտի համաձայնէք մեզ հետ, որ անկարելի է զործարանները հանրերն ու բանկերը թողնել մասնաւոր անձանց ձեռքին, որով ժողովրդական մասսաների ստեղծած արտադրութեան հսկայական միջոցները միշտ գործադրում են մթերքներն ու կապիտալն օտար երկրներ արտահանելու համար և նրանց վրէժն փաթաթած բարիքների համար վերցնելով նրանցից դերձահ: Իսկ աւարի համար մղած նրանց այդ կռիւր առաջ է բերում իմպերիալիստական պատերազմներ:

Ուստի և, Պարոն Նախագահ, մենք առաջարկում ենք, որ բոլոր երկրների կապիտալիստների սեփականադրկումը նոյնպէս լինի ժողովուրդների զաշնակցութեան հիմքը: Ձեր երկրում, Պարոն Նախագահ, բանկերն ու արդիւնաբերութիւնը գտնուում

են այնքան սակաւաթիւ կապիտալիստներին մի խմբակի ձեռքում, որ, Ձեր անձնական բարեկամ ղեկավար Ռոբերտսի ասելով, բաւական է ձերբակալել կապիտալիստական թաղթանների մի 20 գլխաւորներ և ժողովրդական զանգւածներին յանձնել այն, ինչ որ նրանք ձեռք են բերել կապիտալիստական աշխարհին յատուկ մեթոդներով, որպէսզի այդպիսով նոր պատերազմների գլխաւոր պատճառը ոչնչացւած լինի: Եթէ Դուք կհամաձայնէք դրան, Պարոն Նախագահ, եթէ այդպիսով ապագայ պատերազմների աղբիւրները կցամաքեն, ապա կասկածից դուրս է, որ հեշտ կլինի խորտակել բոլոր անտեսական անչրպէսները և որ բոլոր ժողովուրդներն իրենց արտադրութեան միջոցներն իրենց ձեռքին ունենալով, կենսապէս շահադրողւած կըլինեն իրար սալու այն, ինչ որ պէտք է իրենց, և ստանալու այն, ինչ որ պէտք է իրենց: Այդ զէպքում խօսք կլինի միայն արդիւններն ազգերի միջև փոխանակելու մասին, իւրաքանչիւր ազգ կարտապրի միայն այն, ինչ որ ուրիշներից աւելի բաւ է արտադրում, և ժողովուրդների զաշնակցութիւնն աշխատաւոր մասսաների փոխադարձ օգնութեան զաշնակցութիւն կլինի: Այն ժամանակ հեշտ կլինի զինւած ուժերը կրճատելու մինչև այն ստորեման, որ անհրաժեշտ է ներքին ապահովութեան համար: Մենք շատ բաւ դիտենք, որ կապիտալիստների շահամոլ դասակարգը փորձ կանի ստեղծելու այդ ներքին փասնպը, ճիշտ այնպէս, ինչպէս այժմ

ուսու կարածատէրերն ու կապիտալիստները՝ ամե-
րիկեան, անգլիական, ֆրանսական զինւած ուժերի
օգնութեամբ փորձուծ են խլել գործարանները բան-
ւորներից և հողը՝ գիւղացիներից: Բայց եթէ ամե-
րիկեան բանւորները ողևորւած ժողովուրդների
գաշնակցութեան Ձեր պազափարով, կկտարեն ամե-
րիկեան կապիտալիստների բնդգիծութիւնն աշնպէս,
ինչպէս մենք ուսու կապիտալիստների բնդգիծու-
թիւնը կտարեցինք, ապա՝ այդ դէպքում, ո՛չ գեր-
մանական և ոչ էլ ուրիշ կապիտալիստները չեն
կարող բաւականաչափ լուրջ փտանդ լինել յազթա-
կան բանւոր դասակարգի համար, այն ժամանակ հե-
րիք կլինի, հասարակութեան իւրաքանչիւր անդամ
օր գործարանում 6 ժամ է աշխատում, մի բանի
ամաւայ բնթոցքում օրական 2 ժամ սովորի դէնք
գործ ածել, ու ամբողջ ժողովուրդը կիմանայ թէ
ինչպէս հաշիւ տեսնի ներքին թշնամու հետ:

Եւ այսպէս, Պարոն Նախագահ, թէ և մենք մեր
կաշի փրայ փորձեցինք, թէ ինչ են նշանակում
Ձեր խոստումները, այնուամենայնիւ մենք կանդնե-
ցինք միջազգային խաղաղութեան խնդրի և ժողո-
վուրդների գաշնակցութեան առիթով Ձեր արած
առաջարկութեանց հողի փրայ: Միայն մենք աշխա-
տեցինք այնքան խորացնել Ձեր առաջարկները, որ
նրանցից դուրս չգան հետեւանքներ, որոնք այնքան
կհակասեն Ձեր խոստումներին, որքան այդ տեղի
ուներցաւ Ռուսիային խոստացած Ձեր օգնութեան
նկատմամբ: Ժողովուրդների գաշնակցութեան մասին



արած Ձեր առաջարկները մենք փորձեցինք աշնպէս
եիշտ ձևակերպել, որ ժողովուրդների գաշնակցու-
թիւնից դուրս չգայ կապիտալիստների գաշնակցու-
թիւն՝ ժողովուրդների դէմ: Եթէ Դուք համաձայն
չէք մեզ հետ, մենք բնաւ հակառակ չենք,
որ Ձեր խաղաղութեան պայմանները հրապարա-
կային քննութեան ենթարկին, ինչպէս որ
այդ պահանջում է Ձեր խաղաղութեան ծրա-
դրի I յօդւածը: Մանրամասութիւնների վերաբեր-
մամբ մենք հեշտութեամբ կհամաձայնենք, եթէ
դուք կանգնէք մեր առաջարկների հողի վրայ:

Բայց հնարաւոր է և մի ուրիշ բան: Մենք
գործ ենք ունեցել Արխանգելսկի յարձակման և Սի-
բիրի արշաւանքի նախագահի հետ, մենք գործ ենք
ուներցել նոյնպէս ժողովուրդների գաշնակցութեան
ծրագրի հեղինակ նախագահի հետ: Այս նախագահ-
ներից առաջինը չէ՞ արդեօք իրապէս ամերիկեան
կապիտալիստական կառավարութեան քաղաքակա-
նութիւնը վարող նախագահը: Արդեօք Ամերիկեան
կառավարութիւնն ամերիկեան ակցիօներական բն-
կերութիւնների, արդիւնաբերական, առևտրական,
երկաթուղային ամերիկեան տրեստների, ամերիկեան
բանկերի, մի խօսքով ամերիկեան կապիտալիստների
կառավարութիւնն չէ՞: Եւ չեն կարող արդեօք
ամերիկեան այդ կառավարութիւնից բղխող ա-
ռաջարկները ժողովուրդների գաշնակցութեան մա-
սին այն հետեւանքը տալ, որ ժողովուրդները նոր
շղթաներով կկաշկանդւեն, և կստեղծւի միջազ-

1003
11834



դային մի տրեսա բանւորներին շահագործելու և թոյլ ժողովուրդներին ճնշելու համար: Իսկ այդ դէպքում, Պարոն Նախագահ, Դուք ի վիճակի չէք լինի մեր հարցերին մեզ պատասխան տալ, և մենք բոլոր երկրների բանւորներին կասենք. «Զգուշացէ՛ք. տակաւին կոտորւում են պատերազմի դաշտում Ձեր միլիոնաւոր եղբայրները, որոնց իրար դէմ է հանել բոլոր երկրների բուրժուազիան, և կապիտալի գլխաւորներն արդէն աշխատում են իրար հետ համաձայնութեան դալ, որպէսզի կենդանի Ֆուսիսներին կարելի լինի ճնշել միացեալ ուժով, երբ նրանք պատերազմի յանցաւորներից հաշիւ կպահանջեն»:

Սակայն, Պարոն Նախագահ, որովհետեւ մենք բնաւ չենք կամենում պատերազմել Ամերիկայի դէմ նոյն իսկ այն ժամանակ, երբ այնտեղ ժողովրդական կոմիտարների Խորհուրդը տակաւին չէ փոխարինել Ձեր կառավարութեան, և Ձեր տեղը տակաւին չէ բռնել Նեղենի Իէքսը, որին այժմ դուք բանառւմն էք պահում. որովհետեւ մենք բնաւ չենք կամենում պատերազմել Անգլիայի դէմ նոյնիսկ այն ժամանակ, երբ դեռ պարոն Լյուդ Չորչի կարինետը չի տեղի աւել ժողովրդական կոմիտարների Խորհրդին Մակլինի գլխաւորութեամբ. որովհետեւ մենք բնաւ չենք կամենում պատերազմել Փրանսիայի դէմ մինչև իսկ այն ժամանակ, երբ Կլեմանսօի կապիտալիստական կառավարութիւնն այնտեղ չի փոխարինել Մերհէմի բանւորական կառավարութեամբ, ճիշտ այն-

պէս, ինչպէս, որ մենք հաշտութիւն էինք կնքում Վիլհելմ կայսրին իր գլուխն ունեցող Գերմանիայի իմպերիալիստական կառավարութեան հետ, որին Դուք աւելի լաւ չէք վերաբերւում, Պարոն Նախագահ, բան մենք—Բանւոր-Գիւղացիական և Յեղափոխական Կառավարութիւնս՝ Ձեզ,—ուստի մենք առաջարկում ենք Ձեզ ի վերջոյ, Պարոն Նախագահ, Ձեր զաշնակիցների հետ միասին բնութեան առնել ստորև բերւած խնդիրներն ու մեզ տալ նրանց ճիշտ, միանգամայն գործնական պատասխանը: Մտադի՛ր են, արդեօք, Ամերիկայի, Անգլիայի և Փրանսիայի կառավարութիւնները ձեռք բաշել ոուս ժողովրդի արիւնն ու ոուս քաղաքացիների կեանքը պահանջելուց, եթէ ոուս ժողովուրդը համաձայնի վճարել զրա համար և փրկանք տալով, իր գլուխն ազատել ճիշտ այնպէս, ինչպէս որ յանկարծակի յարձակման ենթարկւած մարդը փրկանք տալով իր գլուխն է ազատում իր վրայ յարձակում զործած մարդուց: Եթէ այո՛, ապա այդ դէպքում ի՞նչ տուրք են պահանջում ոուս ժողովրդից Ամերիկայի, Անգլիայի ու Փրանսիայի կառավարութիւնները: Պահանջո՞ւմ են արդեօք նրանք, որ իրենց արւեն կոնցեսսիաներ, որ որոշ պայժաններով իրենց յանձնւեն երկաթուղիներ, հանքեր, ոսկու հանքեր և այլն, թէ՛ հողային գիշուժներ, Սիրիի կամ Կովկասի որ և է մասը, կամ Մուրմանեան ափը: Պարոն Նախագահ, մենք սպասում ենք Ձեզնից, որ Դուք որոշակի կպայտնէք, թէ իսկապէս ի՞նչ պահանջներ էք

առաջադրում Դուք և Ձեր դաշնակիցները, ինչպէս նաև կյայտնէք, թէ ունի՞, արդեօք, Ձեր Կառավարութեան և Համաձայնութեան միւս պետութեանց կառավարութիւնների դաշնակցութիւնն այնպիսի մի միութեան բնաւորութիւն, որ կարելի լինի համեմատել Ռուսիայից դիվիզէնդ (շահ) ստանալու նպատակով կազմուած ակցիոներական ընկերութեան հետ, կամ գուցէ Ձեր դաշնակից կառավարութիւններն առանձնակի պահանջներ կանեն, և եթէ այո՛, ապա՝ ո՞րպիսի պահանջներ: Մասնաւորապէս մեզ հետաքրքիր է իմանալու, թէ ի՞նչ են ցանկանում անել Ձեր Ֆրանսիական դաշնակիցներն այն միլիարդաւոր ռուբլիներ խնդրի նկատմամբ, որ Պարիզի բանկիրները փոխառաբար տւել են Ռուսիայի բռնաւորներին, սեփական ժողովրդի թշնամի տորազործ ցարական կառավարութեան: Ինչպէս Դուք, Պարոն Նախագահ, այնպէս և Ձեր Ֆրանսիական դաշնակիցները չեն կարող չիմանալ, որ պատերազմից հիւժուած և իր անտեսութիւնը բարձրացնելու նպատակով ժողովրդական Խորհրդային Իշխանութեան բարիքները տակաւին չօգտագործած ռուս ժողովուրդն ի վիճակի չի լինի լիովին վճարելու Ֆրանսիայի բանկիրներին ցարական կառավարութեան կողմից ի չարս գործադրած միլիարդները նոյնիսկ այն դէպքում, եթէ Ձեզ և Ձեր դաշնակիցներին յաջողւելու լինէր նւաճել ամբողջ ռուսական երկիրն ու արիւնով ողողել, — մի բան, որ թող չի տայ անելու մեր յեղափոխական հերոս Կարմիր Բա-


նակր: Առաջադրում են արդեօք Ձեր Ֆրանսացի դաշնակիցները պահանջ՝ այդ տո՛ւրքն իրենց մասմաս վճարել: Եթէ այո՛, ապա այդ դէպքում ի՞նչպիսի ժամանակամիջոցներով. նախատեսնո՞ւմ են արդեօք նրանք, որ իրենց պահանջները ռուս ժողովրդի ձեռքով ստապալւած ցարական խաչատաակ կառավարութեան միւս պարտատէրերին ևս կըրդեն նման պահանջներ անել: Մենք թող չենք կարող տալ մեզ մտածելու անգամ, որ Ձեր կառավարութիւնն ու Ձեր դաշնակիցներն արդէն չունին պատրաստի պատասխան այն ժամանակ, երբ Ձեր ու նրանց զօրքերն արդէն ճիզ են թափում մեր երկրում յառաջ խաղալու, մեր պետութիւնը զրաւելու և ստրկացնելու ակնյայտ նպատակով: Ռուս ժողովուրդը, յանձինս ժողովրդական Կարմիր Բանակի, իր երկրին պահակ է կանգնել և արիաբար կուռում է Ձեր ներխուժման և Ձեր դաշնակիցների յարձակման դէմ: Բայց Ձեր կառավարութիւնն ու Համաձայնութեան միւս պետութեանց կառավարութիւններն անկասկած պէտք է որ պատրաստի ծրագիրներ ունենան, որոնց համար Դուք Ձեր զինւորների արիւնն էք թափում: Մենք սպասում ենք, որ Դուք լիակատար պարզութեամբ ու որոշութեամբ կյայտնէք մեզ Ձեր պահանջները: Իսկ եթէ մեր սպասումը մեզ խաբի, եթէ Դուք բնու պատասխան չտաք մեր միանգամայն որոշ ու ստույգ հարցերին, մենք զրանից կհանենք այն միանգամայն անկասկածելի եղրակացութիւնը, թէ մենք չենք սխալոււմ,

որ թէ Ձեր կառավարութիւնը և թէ Ձեր դաշ-
նակիցների կառավարութիւնները ցանկանում են
ստանալ ուս ժողովրդից առերբ և՛ դրամով և՛
Ռուսիայի բնական հարստութիւններով և՛ հողային
զբաւումներով: Մենք կասենք այդ՝ ուս ժողովրդին
ու միւս երկրների աշխատաւոր զանգւածներին:
Ձեզնից պատասխան չստանալը մեզ համար լու-
պատասխան կլինի: Ռուս ժողովուրդը կհասկանայ,
թէ Ձեր կառավարութեան և Ձեր դաշնակիցների
պահանջներն այնքան ծանր են և անազխ, որ չէք
կամենում նոյնիսկ հաղորդել Ռուս կառավարու-
թեանը:

Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիտար՝

ԶիՉԵՐԻՆ





ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ռ. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրապետության Սահմանադրումները.
2. Ն. ԼԵՆԻՆ. «Նամակ Ամերիկեան Բանւորներին». գինը՝ 1 ռ.
3. Վ. ՖՐԻՉԷ. «Պրոլետարական պոեզիան» գինը՝ 2 ռ.
4. ՆԵՐՉԱԿ. «Դէպքերը Բազում» (Հայ Յեղ. Դաշնակցութիւնը և Բազի Խորհրդային Իշխանութիւնը) գինը՝ 75 կ.
5. ՉԻՉԵՆԻՆ. «ԲՐԵՍՏԻՑ ՅԵՏՈՅ» (Զեկուցում Խորհուրդների 5-րդ Համագումարին) գինը՝ 1 ռ.
6. Ն. ԼԵՆԻՆ. «Կարլ Մարքս» (Համառոտ կենսագրութիւնը և մարքսիզմի շարադրութիւնը) գինը՝ 1 ռ. 50 կ.
7. ՆԵՐՉԱԿ. «Լեուսական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան» գինը՝ 1 ռ.
8. ԿԱՐԼ ԼԵՆԻՆ. I. «Կոմունիստական Կուսակցութիւնը Գերմանիայում», II. «Կարլ Լիբկնեխտը» (Լիբկնեխտի նկարով) գինը՝ 1 ռ.
9. «Խորհրդային Կառավարութեան նոտան Վիլսընին» գինը՝ 75 կ.

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ԵՒ ՁՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿՏԵՍՆԵՆ.

1. Կ. ՄԱՐԿՍ և Ֆ. ԷՆԳԵԼՍ — «Կոմունիստական Մանիֆեստը» — Պլեխանովի, Կաուցկու և հեղինակների լառաջարաններով.
2. Ն. ԲՈՒՆԱՐԻՆ. «Կոմունիստների ծրագիր».
3. Մ. ՊԱՎԼՈՎԻՉ (Վելտման) «Ասիան և իր դերը համաշխարհային պատերազմի մէջ».

ՊԱՏՐԱՍ ԵՆ ԵՒ ՁՈՒՏՈՎ ՄԱՍՈՒԼԻՆ ԿՅԱՆՁՆԻՆ.

1. Ն. ԼԵՆԻՆ. «Իմպերիալիզմը, որպէս կապիտալիզմի վերջին էտապ».
2. Ն. ԼԵՆԻՆ. «Պետութիւն և յեղափոխութիւն».
3. Կ. ՄԱՐԿՍ. «Պատմական երկեր».
4. Կ. ԿԱՌԻՅՎԻ. «Քրիստոնէութեան Ծագումը».
5. Կ. ԿԱՌԻՅՎԻ, ԷԴ. ԲԵՐՆՇՏԱՅՆ և այլն. «Աջալիզմի կարապետները» (Սոցիալիզմի պատմութիւնը). 2 հատոր.
6. Ա. ԲՈՂԴԱՆՈՎ ԵՒ ՍՏԵՊԱՆՈՎ. «Դասընթացը բարձրատնտեսութեան».
7. Ա. ԲՈՂԴԱՆՈՎ. «Համառոտ բաղադրատնտեսութիւն».
8. Կ. ԿԱՌԻՅՎԻ. «Կ. Մարքսի տնտեսագիտական ուսուցումը».
9. Կ. ԿԱՌԻՅՎԻ. «Դասակարգային շահերի հակամարտութիւնը 1789 թ.ին».

« Ազգային գրադարան



NL0200616

